

ՆԱՄԱԿ
ԵՐՆՇ. ՄԽԻԹԱՐ ԱԲԲԱՅԻ

(Վեցնետիկէն, 20 Յունիս 1736)

Առ Տէր Իսահակ Վրդ.
Քաջ Բարունապետ եւ Առաջնորդ
Էրզրում Մայրաքաղաքի՝

Մեծ յարգանքով եւ յիսուսաւանդ ողջոյնով կու գամ յայտնել
Ձերդ Մեծութեան՝ որ ստացած եմ 15 Փոր. Թուակիր Ձեր սիրալիր
նամակը. եւ Ձեր գրածներէն վարդի նման համեղաբար հոտոտեցի
անուշաբոյր այն բողբոջը սիրոյ, զոր ունիք աստուածային Ս. Գրք-
քին ու հոգեշունչ մատեաններու հանդէպ. նկատեցի նաեւ Ձեր գո-
վելի ջանքն ու բարի նախանձը՝ ի լուսաւորութիւն մեր Ազգին, որ
հեռու է իմաստութեան սէրէն եւ գիտութեան մէջ յառաջադիմելու
ճշմարիտ ջանքէն:

Եւ ասիկա ճշմարիտ է. ո՛րքան կը լսեմ եւ կամ գրքերու միջո-
ցով կը նշմարեմ մեր ազգին մէջ կատարուած ջանքերը, եւ կամ ու-
մանց տենչը՝ դիմելու իմաստութեան լոյսին, ա՛յնքան աւելի կը խան-
դավառուի հոգիս, Յակոբ Նահապետին նման, որ երբ կը լսէր՝ թէ
մեռած կարծուող իր որդին ո՛չ միայն ողջ է, այլ նաեւ Թագաւոր

1. Իսահակ կամ Սահակ, Ահագին յորջորջուած, իր ձայնի ուժգնութեան համար,
Կեղեցի (Քղեցի) էր, աչակերտ Յովհաննէս Կոլոտի, եղած է առաջնորդ Էրզրու-
մի, ապա նաեւ Զմիւռնիոյ: Աղեքսանդր Բ. Կաթողիկոսի մահէն ետք՝ ընտրուած
է Կաթողիկոս Ամենայն Հայոց (1756): Սակայն մնացած է Պոլիս՝ մինչեւ 1757ի
վերջերը, ապա Կարին՝ 1758-59: Նկատելով որ Ս. Էջմիածին երթալու միտք
չունի, ընտրութիւնը չեղեալ համարելով՝ Կաթողիկոս ընտրուած է Յակոբ Ե.
Շամախեցին (1759): Սահակ (Ե.) Կեղեցի մեռած է 1763 թուականին, առանց
օծում ստանալու: Օրմանեան զինք չի մտցներ Կաթողիկոսներու շարքին (ՏԵՊ
ՀՐ. ԱՃԱՌԵԱՆ, Հայոց Անձնանունների Բառարան, հտ. Դ. Երեւան, ՀՍՍՌ Պետ.
ՀՄԼ. Հրատ. 1948, էջ 371, թիւ 173):

պսակուած, կ'ըսէր. «Տեսնեմ դէթ որդեակս իմ, ու այնպէս մեռնիմ»²: Անոր նման՝ ես ալ կ'ըսեմ. Տեսնեմ իմ աղբս եւ անոր նորարարող Վարդապետները՝ իմաստութեան սիրով բոցավառ, Սուրբ Գրքի ծանօթութեամբ ճոխացած, ճշմարտութեան տենչով առլցուն, եւ այն՝ ո'չ միայն բնաբանական գիտութիւններու, այլ նաեւ հասարակական հարցերու մէջ, ու այնպէս մեռնիմ:

Որովհետեւ միտքը՝ որ կը բաղձայ իմաստութեան, նպատակ ունի ճշմարտութիւնը ճանչնալու. որուն եթէ չժամանէ, այլ ճանապարհի կէսին կանգ առնելով՝ հետամուտ ըլլայ իր տեսակէտներուն վրայ պնդելու, եւ կամ ուրիշներունը հերքելու, երբեք պիտի չյաջողի ձեռք ձգել այն՝ որուն կը տենչայ: «Որովհետեւ, ուր կայ քէն ու նախանձ, հոն է անկարգութիւնն ու ամէն չար բան»³, Յակոբոս Առաքեալի ըսածին համաձայն: Իսկ ով որ կանգ չ'առնէր, այլ միշտ կ'աշխատի քննել հարցերը՝ ճշմարտութեան սիրոյն համար միայն, կը հասնի անոր, կը գրկէ զայն՝ իր յատկութիւններով հանդերձ. այն յատկութիւններով՝ որոնց մասին կը յարէ Առաքեալը. «Իսկ վերին իմաստութիւնը՝ որովհետեւ սուրբ է, ապա ուրեմն՝ նաեւ խաղաղարար, հեզ, դիւրահաւան», եւն...»⁴:

Ու թէպէտ, մեր ազգին մէջ, կան ժողովուրդին հետ յարաբերութիւն մշակող անձեր՝ որոնք մեծ ճիգ կը թափեն զարգացնելու համար բարձրագոյն ուսումները, ճշմարտութեան հասնելու նպատակով, սակայն ասով հանդերձ՝ պէտք են շատ աշխատիլ անոնք: Ըսի՝ թէ մեծ ճիգ կը թափեն. արդարեւ մեր ազգը, Մովսէս Խորենացիի խօսքին համաձայն, ուսումնաստեաց ըլլալով, եւ իմաստութեան ճաշակն երբեք առած չըլլալով, ինչպէս նաեւ համոտեալ չըլլալով անոր օգուտն ու համեղաճաշակ պտուղները, յաճախ արգելք կը հանդիսանայ իմաստութեան մէջ յառաջադիմողներուն:

Սակայն, ով որ կը սիրէ ճշմարիտ իմաստութիւնը, պէտք է ինքզինքն հեռացնէ արգելիչ տարրերէ, առանց ոչ մէկ բան ակնկալելու անոնցմէ. ո'չ փառք, ո'չ պատիւ, ոչ իսկ բեռնաբարձ օգնականներ. այլ Մովսէս Խորենացիի նման՝ ինք պէտք է վերցնէ իր պարկը, ճամբու ընթացքին, եւ չյուսայ որ իր ազգէն մէկը իր բեռը վերցնելու դայ: Որովհետեւ եթէ բեռը վերցնող մը գտնէ, կամ նոյնիսկ չնչին պատիւ մը ու փառք ընդունի իր ազգակիցներէն, իսկոյն պիտի նըշմարէ որ անոնք գերազանցօրէն հրամայող պիտի դառնան իրեն: Եւ երանի՜ թէ մէկ հոգի ըլլար հրամայողը. որքան ալ անտրամաբան ըլլար պահանջածը՝ կարելի էր գործադրել. բայց այդպիսիները բազմաթիւ են, եւ իրարու ներհակ բաներ կ'առաջարկեն, եւ ասկէ՝ անհնարին է բոլորին ալ մտիկ ընել:

մաթիւ են, եւ իրարու ներհակ բաներ կ'առաջարկեն, եւ ասկէ՝ անհնարին է բոլորին ալ մտիկ ընել:

Այս մասին, ուրեմն, ըսելիքս այն է՝ թէ մեր ազգին մէջ, իմաստութիւն փնտռող ուսումնասէրը պէտք է ունէ մէկէն ակնկալէ ո'չ հանգիստ, ո'չ փառք, ոչ ալ պատիւ. ապա թէ ոչ՝ կը կաշկանդէ իր ազատութիւնը, կը պարտաւորուի ընել այն՝ ինչ որ իր մտքին ու կամքին հակառակ է. ու այսպէս ահա՝ կը գոյանայ արգելքն ու խոչը՝ ճշմարիտ իմաստութեան ճանապարհին վրայ, եւ կը խափանէ յառաջադիմողին ընթացքը դէպի բարին տենչալի:

Արդ, թող բաւեն ըսածներս՝ նկատմամբ իմ հոգեկան ուրախութեանս, որ կը բղխի իմաստութեան հանդէպ Ձեր տածած սիրոյն մեծութենէն, ինչպէս նաեւ սաստկութենէն այն ճիգերուն՝ զոր Դուք կը թափէք այնպիսի տարրերու մէջ, որոնք ոչ մէկը կը պատուեն կամ կը յարգեն, ոչ ալ արժանաւոր աստիճանի մը կը բարձրացնեն, եթէ նախապէս՝ անոր հրամայելու ելած չըլլան բազմութեամբ:

Իսկ նկատմամբ Ձեր գովելի եւ իրադրածման արժանի խնդրին, սրտի մեծ ցաւով եւ հոգեկան վիշտով՝ կու գամ պատասխանել թէ ամենեւին ժամանակ չունիմ ինքզինքս պարտաւորելու սրբազրութեան եւ տպագրութեան այն գրքին, որ կը խօսի կենդանիներու բարքերուն եւ այլ իրերու քննութեան մասին, մարդկային գործերու զանազան տեսակներուն առնչութեամբ: Եւ այս ճշմարտապէս այսպէս է. որովհետեւ եթէ ժամանակ ունենայի, առանց տպագրածախս իսկ պահանջելու, իսկոյն կը նուիրուէի գործին սրբազրութեան եւ հրատարակութեան: Բայց ի՞նչ կ'ընամ ընել. ինծի համար հիմա անհնարին է թողուլ ունեցած բեռներս, եւ ինքզինքս դնել այս նոր բեռան տակ⁵:

Ու եթէ Ձերդ Գերապատուութիւնը իրազեկ ըլլար թէ այն սակաւ ժամանակն ալ որ ունիմ՝ ի՞նչ եւ ի՞նչ տեսակ գործի սահմանած եմ, զոր կը ջանամ ամբողջացնել, անշուշտ ոչ միայն չէր խնդրեր ինծմէ ինքզինքս կապել այդպիսի գրքի մը տպագրութեան աշխատանքներուն, այլ նոյնիսկ կը պարտաւորէր զիս՝ չլքել ձեռքիս գործը, որեւիցէ ուրիշ պատճառով:

Կը յուսամ թէ քանի մը ամիսէն Ձեր մօտ կը հասնի Ժողովուրդի մեկնութիւնս, որուն տպագրութիւնը այս ամիս կ'աւարտի. անոր մէջ

5. Իսահակ Արքեպ. Կ. Պոլսէն, 1736ի Փետր. 15ին նամակ կը գրէ Մխիթար Արքաւոր, Վենետիկ, խնդրելով որ Վենետիկ տպուի «Գիրք կենդանեաց»ը: Պատճառն այն է՝ որ մեծ համարում ունէր Մխիթարի վրայ, իր տպագրիչ ու սրբազրիչ: Մխիթար, ցաւով սրտի, մերժողական պատասխան կու տայ, պատճառ բերելով իր զբաղումները՝ Մատթէի Աւետարանին եւ Ժողովուրդի գրքին Մեկնութեանց անյետաձգելի աշխատանքները, յաջորդաբար Սաղմոսին մեկնութեան ձեռնարկը եւ Բազմբերն գործը (Ասոնց մասին տե՛ս նաեւ Մխիթարի այլ նամակները՝ թիւ 482, 512, 525, Դիւան Ս. Ղազարի):

2. Ծն. Թ. 28:

3. Թակ. Գ. 16:

4. Թակ. Գ. 17:

պիտի տեսնէ՞ք հաւաստիքն աշխատանքիս՝ որով զբաղած եմ ներկայիս. եւ վստահ եմ թէ ատով իսկապէս պիտի համոզուիք՝ թէ որքան օգտակար է մեր ազգին համար նաեւ այն գործը, որ ձեռքիս տակն է, զոր ահա կ'աճապարեմ ամբողջացնել:

Յուսով եմ թէ այս քանի մը խօսքերը, որով ինքզինքս ջատագովեցի՝ Ձեր առաջարկին դիմաց, դիս բաւականաչափ պիտի արդարացնեն Ձեր ներքիմաց իմաստութեան առջեւ: Ուստի, աւելի չձանձրացնելու համար Ձերդ Գերապատուութիւնը՝ վերջ կու տամ զրուութեանս, խնդրելով Աստուծոյ Ձեզի համար՝ երանական վախճանին առաջնորդող ամէն բարիք՝

Մնամ ամէն բանի պատրաստական

Ձերդ Գերապատու վեհանձնութեան

ամենանուստ ծառայ ծառայից

ՄԽԻԹԱՐ ՎՐԴ. ՍԵՐԱՍՏԵԱՆ

Արքահայր կոչուած անարժան

1736, Յունիս 20

Վեներտիկ, Ս. Ղազար

Հայոց Մեմաստան

(Դիւան Մխ. Արքայի, մամակ քիւ 525)

Աշխարհաբարի վերածեց՝ Հ. Ն. Տ. Ն.

6. Սահակ Արքայ. ուրիշ անգամներ եւս հետապնդած է իր նոյն ծրագիրը: 1743ի Հոկտեմբերին, Պոլսէն Ձմիւռնիա մեկնելէն առաջ, Թախանձագին կը խնդրէ Մխիթարի աշակերտ՝ Հ. Միքայէլ Վրդ.էն միջնորդել Մխիթարի առջեւ, ու Հ. Միքայէլ կը գրէ Արքահայր (1743 Հոկտ. 17), սակայն կը մնայ անպատասխան: Աւելի ուշ, դարձեալ Սահակ Արքայ. ի խնդրանքով, Հ. Միքայէլ կը գրէ Մխիթարի (1745 Յունիս 28), հայցելով որ անպայման ընդունի առաջարկը, մանաւանդ որ Սահակ Արքայ. թոյլ կու տար Մխիթարի՝ սրբադրել, վերածել կամ յապաւել բնագրէն՝ ինչ որ անյարմար կը դատէր հրատարակութեան: Սահակ Արքայ. առանց յուսահատելու, դարձեալ կը դիմէ Մխիթարի, միշտ Հ. Միքայէլ Վրդ.ի միջնորդութեամբ (1746 Յունուար 24), առաջարկելով Մխիթարի՝ նոր Թարգմանութիւն մը, յայտարարելով թէ պատրաստ է հոգալ բոլոր ծախսերը: Մխիթար, սակայն, երբեք յանձն չէ առած այդ գրքին տպագրութիւնը, անշուշտ զայն անհաշտ նկատելով իր ծրագիրներուն հետ, ու միշտ մերժողական պատասխանած է: Տարիներ ետք, Սարգիս Արքայ. Սարաֆեանի հոգատարութեամբ, կը տպագրուի յիշեալ գիրքը՝ Վեներտիկ, «Գիրք օրինակաց եւ մատուցանեց խորագրով (1750): Տպագրութեան եւ այլ պարագաներու մասին տե՛ս Հ. Գ. ԳԱԼԷՄՔԻԱՆԻԱՆ, Կենսագրութիւն Սարգիս Արքայիսկոպոսի եւ ժամանակին հայ կաթողիկոսայ (Ազգ. Մանդ. Ծե.), Վիեննա 1908, էջ 231):

ՄԽԻԹԱՐ ԱՐԲԱՀՈՐ ՀՐԱՏԱՐԱԿԶԱԿԱՆ ԱՌԱՔԵԼՈՒԹԵԱՆ ԳՈՀԱՐՆԵՐԸ

Մխիթար Արքահայր ծննդեան 300ամեակը առիթ առնելով, ուղեցինք յօդուածի մը մէջ ամփոփել մեր Երանաշնորհ Հիմնադիրին կատարած գրական առաքելութեան պատմութիւնը, եւ երբ ձեռնարկեցինք գործին՝ ընդարձակուեցաւ եւ առաջ եկաւ ծաւալուն ուսումնասիրութիւն մը:

Անդրադարձանք Մխիթար Արքահայր կատարած իւրաքանչիւր հրատարակութեան վրայ առանձին, տալով դիւանական ու մատենագիտական ծանօթութիւններ, նպատակ ունենալով դուրս ցայտեցնել Մխիթարի գաղափարականը, այն է՝ դրդապատճառը իր հրատարակչական գործունէութեան:

Առաջին իսկ ակնարկով՝ շատ յստակ կը տեսնուի որ Մխիթար չէ փնտռած ո'չ փառք եւ ոչ նիւթական շահ. իր միակ տեսլականն եղած է հասնիլ իր ազգին՝ գաւազներէն իւրաքանչիւրին օգնութեան, սորվեցնել անոնց՝ մայրենի լեզուն, կրթել անոնց հոգիները, առաջնորդել ամէնքը յաւիտենական ճշմարտութիւններուն: «Լուսաւորութիւն Ազգիս», երկու բառեր, որոնց շարունակ կը հանդիպինք Մխիթար Արքահայր գրութիւններուն մէջ. ան կ'ուզէ տեսնել իր ազգը՝ սթափած քունէն, կ'ուզէ աղաղակելով սորվեցնել անոնց թէ կայ կեանք մը՝ լի իմաստով:

Ու կը տեսնենք զինքը խոնարհած հայ մանուկին առջեւ, տալու համար անոր Այրբեմարանն ու Քրիստոնէականը, պատանիին դիմաց՝ սորվեցնելու Քերականն ու Զարգացելոցը, չափահասին՝ բացատրելու Մովսէս-Խնամբէ հրաժարիլն ու Առաքինութիւններու հետեւիլը. կու տայ ամէնուն Աստուծոյ Շունչը տպագիր, բացատրելով ամէնուն ու Մեկնելով նոյն գիրքին մէջ պարունակուած երկնային իմաստները. կը հրաւիրէ ամէնքը իջնել Պարտէզ հոգեւոր եւ կամ